«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 25.07.2017թ. ժամը 16:00

Համաձայն 14.07.2017թ. թիվ 63 գրությամբ՝«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանից, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝14.07.2017թ-ին ստացված դիմումը «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Սպարտակ Ստեփանյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հուլիսի 25-ին ժամը 16.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանը
«Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Սպարտակ Ստեփանյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ «Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանը
«Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Սպարտակ Ստեփանյանը, տեղյակ լինելով հանձնաժողովի նիստի,տեղի և ժամանակի մասին,ներկայացրել է գրավոր առարկություններ դիմումի դեմ,կից փաստաթղթեր և պատճառաբանելով,որ այդ նույն օրը այլ սնանկության վարույթով նշանակված է աճուրդ և առկա են հայտեր և իր ներկայությունը աճուրդի անցկացմանը պարտադիր է,խնդրել է նիստը անցկացնել իր բացակայությամբ իր ներկայացրած նյութերի և փաստերի հիման վրա,կամ հետաձգել մեկ այլ հերթի:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանի, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ուղղված դիմումի հիմքով «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Սպարտակ Ստեփանյանի, գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Սպարտակ Ստեփանյան ելեկտրոնային տարբերակով ներկայացրած առարկությունները և փաստաթղթերը և խնդրեց հայտնել կարծիք առանց սնանկության գործով կառավարչի հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ:Հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և հայտնեցին կարծիք,որ կառավարչի բացակայությունը պայմանավորված է հարգելի պատճառներով և նրա կողմից ներկայացվել է գրավոր առարկություններ և իր կարծիքը ապացուցող փաստաթղթեր, որոնք արտահայտում են իր դիրքորոշումը,որը պետք է արտահայտեր ըստ էության կառավարիչ

ներկա գտնվելով,ուստի բոլորը միակարծիք էին,որ նիստը կարելի է անցկացնել սնանկության գործով կառավարչի բացակայությամբ:
Հանձնաժողովի նախագահն կարծիք հարցրեց նաև «Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/ա Հայրապետ Գալստյանից,առանց սնանկության գործով կառավարչի նիստը անցկացնելու վերաբերյալ:Դիմումատուն հայտնեց այն կարծիքը,որ գերադասելի էր,որ կառավարիչը ներկա գտնվեր,բայց եթե նրա բացակայությունը չի խանգարում հանձնաժողովի անդամներին եզրակացության գալու համար,ուստի իրենը նույնպես չի առարկում հանձնաժողովի նիստը առանց սնանկության գործով կառավարչի անցկացնելու կարծիքին:

ԼՍԵՑԻՆ `
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝14.07.2017թ-ին՝«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանից ստացված դիմումը, նշելով որ «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ է հանդիսանում՝Սպարտակ Ստեփանյանը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Սպարտակ Ստեփանյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության
ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ `
14.07.2017թ-ին թիվ 63 գրությամբ՝«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝14.07.2017թ-ին ստացված դիմումը«Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Սպարտակ Ստեփանյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ `
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և կից փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները, «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Սպարտակ Ստեփանյանի, գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ ՝Ա.Ադամյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող «Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանի կարծիքը և նրա ներկայացրած փաստարկները:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց, «Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանին,ով մասնավորապես նշեց,որ «Գալէքսիմ»ՍՊ ընկերությունը,Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2017թ-ի ԵԱՔԴ/0442/04/16 վճռով ճանաչվել է սնանկ,նույն դատարանի 10.05.2017թ-ի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ՝Սպարտակ Ստեփանյանը,որից անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը արգելադրել է ընկերության բանկային հաշիվները,որի հետևանքով խաթարվել է ընկերության բնականոն գործունեությունը և պայմանագրերի կատարումը,որը ինքը 23.05.2017թ-ի կնքել է կառավարչի նետ բանավոր/հեռախոսով/ զրույցից հետո ընկերության առողջացման նպատակով և որպես պայմանագի մի մասի կատարում իր գործընկերոջից ստացել է դրամական միջոցներ ծառայություններ մատուցելու համար,իսկ կառավարիչը իր հորդորներին չլսելով արգելադրել է բանկային հաշիվը և թույլ չի տալիս օգտագործել այդ գումարը,դրանով կործանելով ընկերությանը:

Հանձնաժողովի անդամ՝Մ.Մարտիկյանը հարց ուղեց դիմումատուին առ այն թե ինչքան է եղել ընկերության պարտավորությունները ՀՏ-ի նկատմամբ դիմումի ներկայացման օրվա դրությունմաբ և ինչքան է կազմել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու օրվա դրությայամբ:Դիմումատուն պատասխանեց որ ընկերության պարտավորությունները աճել են և աճել են տնտեսական գործունեության արդյունքում:Մ.Մարտիկյանը հարցրեց նաև այն մասին թե ինչ պատճառով է,որ սնանկության գործով կառավարչին չի ներկայացվել ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը,որից կարող էր պարզվել այդ տնտեսական գործունեության արդյունքները:Դիմումատուն պատասխանեց որ այդ փաստաթղթերը գաղտնի չեն և ինքը պատրաստվում էր դրանք ներկայացնել կառավարչին,բայց կառավարչի գործողությունները իրեն դրդեցին,որ ինքը կասկածի այդ փաստաթղթերի ներկայացման արդյունքների վերաբերյալ,այդ պատճառով էլ փաստաթղթերը դեռ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղեց դիմումատուին թե արդյոք կառավարչի կողմից բացատրվել է պարտապանին «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջները և ընդհանրապես սնանկության վարույթի ընդհանուր դրույթները:

Պարտապանը պատասխանեց որ կառավարչի կողմից բացատրվել է առողջացման ծրագրի հնարավորությունների մասին,որի ուղղությամբ էլ ինքը աշխատել է և այժմ էլ կրում է վնասներ այդ ծրագրի մաս կազմող ծառայությունների համար վճարված գումարը չտնօրինելու համար,որը հետևանք է կառավարչի արգելանքների կիրառման:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների և կից փաստաթղթերի համադրումից պարզ է որ դիմումատուն տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի առկայությունից,իր պարտավորություններից և պարտականություններից,բայց փորձում `օգտվել այն հանգամանքից որ ընկերության գործունեությունը կասեցված չի և բնականոն գործունեություն ծավալելու օրենքով հիմքեր կան,ուստի կարող է հաշվում եղած գումարը կառավարչի միջոցով/սույն դիմումով ստիպելով/ հանել արգելանքից և օգտագործել այլ նպատակներով,որին կառավարիչը չեր կարող համաձայնել,որովհետև արդեն կա օրինակ որ ընկերությունը գումարները օգտագործում է ոչ առաջնային պահանջների բավարարման ուղղությամբ իսկ բյուջեյի նկատմամբ պարտավորությունները աճում են:

Այսինքն իր կարծիքով կառավարիչը կապ չունենալով դրամական միջոցների վրա կիրառված արգելանքների կիրառման մեխանիզմների հետ,անհիմն,ուղղակի մեղադրվում է դրանց կիրառման մեջ,բայց կառավարչի գործողությունները եղել են իրավաչափ և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի հիմքով արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի տնօրինումը,որի հիմքով էլ դատարանի կողմից Վճռով կիրառվում են արգելանքներ,այդ թվում նաև դրամական միջոցների վրա,ՀՀ Կենտրոնական Բանկի միջոցով,բանկային հաշիվների վրա,որը և իրականացվել է,որի արդյունքում էլ ստացված գումարը արգելափակվել է բանկում և առակա է որպես մնացորդ: Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ անգործության մեղադրանքներին ապա դրանք մտածածին են և չեն համապատասխանում իրականությանը,դեռ ավելին պարտապանը խուսափելով ներկայացնել կառավարչին հաշվապահական հաշվառման փաստաթղթերը հնարավորություն չի տալիս կառավաչին կատարելու ընկերության ֆինանսա կան վիճակի վերլուծություն և գույքագրում,որից պարց կդառնար ընկերության գործունեության վնասաբերությունը և կարող էր հիմք ծառայել կառավաչի համար կողմնորոշվելու տվյալ գումարների օգտագործման եղանակների միջնորդության համար ի նպաստ պարտապանի և պարտատերերի:

Միաժամանակ հանձնաժողովի նախագահն նշեց,որ 23.05.2017թ-ին մուտքագրված գումարը, 16.06.2017թ-ին կառավարիչը բաշխել չեր կարող քանի որ պահանջների պահանջների վերջնական ցուցակը հաստավել է միայն12.07.2017թ-ի դատարանի որոշմամբ:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Ս.Ստեփանյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով,իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել,ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 14.07.2017թ-ին թիվ 63 գրությամբ՝«Գալէքսիմ»ՍՊ ընկերության տնօրենի ժ/պ Հայրապետ Գալստյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝14.07.2017թ-ին ստացված դիմումի հիմքով «Գալէքսիմ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Սպարտակ Ստեփանյանի գործողությունների /անգործության/ նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի կարգով և բխե են նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան